ԱԶԳ

# Ընթացիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

## Ի զիսություն հայ դիվանագետների

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ամերիկահայ

## Մի՞թե մենք խավարը այդքան սիրեցինք

*Նորից ջեռուցման ժամանակի մասին*

ԱՐՄԵՆ ՄԱԴԱՅԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂ

## Հայկական պատվիրակությունը կմասնակցի Դանիայում գումարվող համաժողովին

Մարտի 17-20-ը ...

ՀԱՄԱՌՈՏ

## Սամվել Սեւադյան հաղթահանդեսատանում կանցնի այլ աշխատանքի

## Քննարկվում են էլեկտրատրանսպորտի եւ հեռախոսակապի ավելացման հարցերը

## Արգելի-Շամիրամ ջրանցքն ամեն տարի կարող է անակնկալներ մատուցել

## Անցած տարի, 1995-ի համեմատությամբ, մթնոլորտն ավելի է աղտոտվել

... 28 հազար 418 տոննայից:

Երեւանում 7-ի փոխարեն գործել է 4 դիտակետ, որոնք ուսումնասիրել են մթնոլորտում 13 վնասակար միացությունների խտությունները: Վերցված 20 հազար 461 նմուշից 24 տոկոսի մեջ սահմանային թույլատրելի խտությունը գերազանցվել է ...

... 500 նմուշից 75 տոկոսի մեջ սահմանային թույլատրելի խտությունը գերազանցվել է առավելագույնը 5,6 անգամ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ

«AZG» DAILY NEWSPAPER

Editor

H. AVEDIKIAN

Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

# Ադրբեջանը խեղաթյուրել է փաստերը

*Պարզաբանում է ԱԺ մամլո ծառայության ղեկավարը*

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

# Վերահսկիչ պալատի նախագահը պահանջում է տեղեկատվություն

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

# Կիպրոսի Հայկական Ս. Մակար վանքը թալանված ու խանգված

# Անդրկովկասի լրատվական միջոցների սեմինար Թբիլիսիում

Ա. Հ.

ԵՐԵՎԱՆ

# «Տիկնայք և պարոնայք»-ը՝ առայժմ 8 ամսով

Ա. Պ.

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25/1

# Պատկերություն Նուբարաշենի մեկուսարանում

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Ինչո՞ւ են դիմում սոցապ նախարարություն ու հասկապես նախարարին

digitised by A.R.A.R.@

Ազգ
Azg
հայեցակետ
7 ՄԱՐՏ 1997, ՈՒՐԲԱԹ #43 (1297)

# Երիտասարդական քաղաքականություն

Որպես այս համարի ներդիր-հավելված «Ազգը» հետագա էջերում ներկայացնում է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ Արշակ Բանուչյանի ուսումնասիրությունը, որ 12 գլուխների եւ բազմաթիվ ենթակետերի մեջ փորձում է ներկայացնել հայ կենսունակ սերնդի դաստիարակության հիմնադրույթների հայեցակետերը: Հարցի լայն ընդգրկումով պատրաստված մի ուսումնասիրություն, որը ներկայացնելով ընթերցողներին մեր թերթը նպատակ ունի ա) կարեւորել հայ երիտասարդության համընդհանուր դաստիարակության, երիտասարդական քաղաքականություն մշակելու, որդեգրելու հարցը, եւ բ) մղել մեր մասնագետներին եւ առհասարակ ընթերցողներին արտահայտվելու այդ մասին: Քանի որ, ինչպես հեղինակն է ընդգծում, ուսումնասիրությունը դեռեւս տեղ ունի լրամշակման, գուցե նաեւ ճշգրտումների:

Պարզվում է, որ Հայաստանում 7-30 տարեկան բնակչության թիվը կազմում է ավելի քան 820 հազար: Այսինքն, մեր հանրապետության բնակչության մեկ երրորդը դպրոցականներ ու երիտասարդներ են, ինչը մեզ թույլ է տալիս ասելու, որ Հայաստանի բնակչությունը գերազանցապես երիտասարդ է: Սա մեծագույն առավելություն է, հզորագույն ներուժ որեւէ երկրի համար, եթե կարողանանք ազգաբնակչության այդ հատվածին տալ ազգային-պետական եւ ժամանակակից դաստիարակություն, ֆիզիկական ու մտավոր կրթություն, ազգային ու ընտանեկան արժեքների գիտակցություն, խթանել նախաձեռնության ոգին, հասարակության շահերին ու հայրենիքին նվիրվելու պատրաստակամությունը եւ ամենագլխավորը, աշխատանքային հեռանկարներ բացել նրա առաջ:

Իսկ եթե չկարողանա մեր պետությունը, մեր հասարակությունը այդ անել, ապա մեր երկրի ամենագլխավոր այդ առավելությունը՝ երիտասարդությունը կդառնա դժբախտություն, քանի որ, հասկանալի է, 20-30 տարեկան երիտասարդությունը ազգաբնակչության ամենաշարժունակ, ամենաանորոշ հատվածն է, ամենահակամետը արտագաղթելու:

Հայ մարդը հայ հողի վրա, այս հողի վրա պետք է տեսնի իր եւ զավակների ու թոռների ապագան: Սրանից կարեւոր ազգային-պետական առաջադրանք չիք մեզ համար: Եւ ուսումնասիրության հեղինակը աշխատել է ընդգրկել, գրեթե ամբողջ կտրվածքով, երիտասարդ սերնդի դաստիարակության հիմնադրույթները, որոնց կենսագործումից է կախված մեր երկրի ապագան:

Այդ դաստիարակությանը մասնակցում են, ինչպես հեղինակն է մատնանշում, եւ դպրոցը, եւ բուհը, եւ ֆիզիկական դաստիարակության համակարգը, եւ բանակը, եւ մեր Ազգային եկեղեցին, եւ ստեղծագործական միությունները, եւ կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները:

Այդ դաստիարակության ոլորտում ամենակարեւոր օղակը սակայն հանդիսանում է ընտանիքը, հայ ընտանիքը: Ավանդապաշտ, ներքին ամրությամբ հատկանշվող, երեխաների ֆիզիկական, հոգեւոր ու մտավոր զարգացման նախանձախնդիր ընտանիքը: Ուժեղ ընտանիքը պետության եւ հասարակության բեռն է թեթեւացնում, եւ նյութական, եւ բարոյական առումներով: Եւ սա, ընտանիք-միավորը, հայ իրականության մեջ ավանդաբար աշխատող օղակ է, մոդայիկ բառով՝ մեխանիզմ, որ բազմաթիվ պարագաներում փոխարինում-լրացնում-հեշտացնում է դաստիարակության մյուս գործոնների եւ ընդհանրապես պետության հոգսը: Հետեւաբար ընտանեկան արժեքների, ներընտանեկան առողջ կապերի պահպանումն ու ամրապնդումը նույնպես պետք է լինի մեր պետության հիմնական լծակներից մեկը, ուժեղ ընտանիք՝ ուժեղ պետություն նպատակակետով:

Ու որպեսզի առավել շեշտվի ընտանիքի դերի կարեւորությունը երիտասարդ սերունդների դաստիարակության գործում, ուսումնասիրության հեղինակը եւ «Ազգ»-ի էջադրողները որպես խորհրդանշան ընտրել են դարասկզբի պարտիզակցի մի հայ ընտանիքի լուսանկարը, եւ դրանից ստեղծել կերպարային մանրամասներ, ընդգծելով յուրաքանչյուր կերպար առանձին-առանձին, եւ վերջում նրանց վերահավաքել հայ ավանդական ընտանիքի կուռ միասնության մեջ:

Անցումային ժամանակներ են, արժեքների արագ փոփոխության ժամանակներ: Անհրաժեշտ է ունենալ ազգային-պետական հիմնարար կողմնորոշիչներ: Եւ հետագա էջերում ներկայացվող նյութը ձգտում է նպաստել այդ կարեւոր գործին:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ



Պարտիզակցի հայ ընտանիք

